«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝

Ուսուցչի մասնակցությունը հաստատության մեթոդ միավորումների (առարկայական մասնախմբի) աշխատանքներին

Առարկան՝ Քիմիա

Հետազոտող ուսուցիչ՝ Պայծառ Բարբարյան

Ուսումնական հաստատություն՝ Նոր Արտամետի միջնակարգ դպրոց

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն.....3

Հետազոտության նպատակը և վերջարդյունքները.....4

Ուսուցչի մասնակցությունը հաստատության մեթոդ միավորումների (առարկայական մասնախմբի) աշխատանքներին.....5

Եզրակացություն.....4

Գրականություն.....11

Ներածություն

Հաստատության մեթոդ միավորումները (առարկայական մասնախմբերը) հաստատության այն օղակներն են, որոնց մասնակցությունը Կրթակարգի հիմնական գորառույթների իրականացման առումով կարևոր են:

Օգնում և իրականացնում են՝

- կրթության բնագավառում քաղաքականության միասնականության ապահովումը.
- կրթության որակի բարելավման ապահովումը.
- կրթության համապատասխանեցումը պետության և հասարակության առաջադրած խնդիրներին, անհատի պահանջմունքներին և միջազգայնորեն ընդունված չափանիշներին.
- Հայաստանի Հանրապետությունում իրականացվող հանրակրթական հիմնական ծրագրերի հաջորդականության ապահովումը.
- մասնագիտական կրթական ծրագրերի մշակման և իրականացման հարակից առարկաների ուսուցիչներից. որովհետև ժամանակակից գիտության բոլոր հիմքերի ստեղծումը:

Այս առումով մեծ է դերը ուսուցիչների մասնակցության, քանի որ մեթոդական միավորումները ստեղծվում են նույն առարկայի երեք և ավելի ուսուցիչների առկայության դեպքում: Մյուս դեպքերում կարող են ձևավորվել մեթոդական միավորումներ հարակից առարկաների:

Գիտության ճյուղերը սերտորեն կապված են և որակյալ ուսուցման համար անհրաժեշտ է ընդհանրական մոտեցում:

Հետազոտության նպատակը և

վերջարդյունքը

«Ուսուցչի մասնակցությունը հաստատության մեթոդ միավորումների (առարկայական մասնախմբի) աշխատանքներին» թեմայով հետազոտության նպատակն է .

Կարևորել ուսուցչի մասնակցությունը մեթոդական միավորման աշխատանքներին:

Վերջարդյունքներն են.

1. Ուսուցչը անմիջական իր մասնակցությամբ նպաստի որակյալ ուսուցման կազմակերպմանը:
2. Մեթոդ միավորումն դարձնի այն օղակը, որի միջոցով ուսուցիչը հաստատության տնօրենությանը, լիազոր մարմիներին, կառավարությանը հաղորդակից դարձնի առկա ուսումնական խնդիրներին և ստանա ցուցումներ խնդիրների լուծման համար:
3. Մեթոդ միավորումում ուսուցիչների առաջարկները, կարծիքները, նախաձեռնությունները օրինականացվի կամ փոխանցվի ավելի բարձր օղակների իրավական լուծումներ ստանալու համար:
4. Մեթոդ միավորման միջոցով իրացվի ուսուցիչների համագործակցության, փոխօգնության, ուսումնական պրոցեսին միասնական մոտեցման խնդիրների լուծումը:

Ուսուցչի մասնակցությունը հաստատության մեթոդ միավորումների (առարկայական մասնախմբի) աշխատանքներին

- Առարկայական մեթոդական միավորումներն ստեղծվում են նույն առարկայի երեք և ավելի ուսուցիչների առկայության դեպքում: Մյուս դեպքերում կարող են ձևավորվել մեթոդական միավորումներ՝ հարակից առարկաների ուսուցիչներից:
- Դասվարների համար ստեղծվում է տարրական կրթության մեթոդական միավորում:
- Առարկայական կամ տարրական կրթության մեթոդական միավորումը՝

1) քննարկում է հանրակրթական առարկայական չափորոշիչներին համապատասխան ուսումնական ծրագրերի, ուսումնական պլանների նախագծերը, նոր փորձարկվող դասագրքերը, ձեռնարկները, մեթոդական ձեռնարկները և դրանց քննարկումների վերաբերյալ ուսուցիչներին (դասվարներին) տալիս երաշխավորություններ.

2) քննարկում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի անհատական ուսուցման պլանը.

3) ուսումնասիրում, ընդհանրացնում է մանկավարժական առաջավոր փորձը և այն ներդնում գործնական աշխատանքում.

4) նպաստում է ուսուցիչների (դասվարների) որակավորման բարձրացմանը.

5) որակավորման տարակարգ չունեցող սկսնակ ուսուցիչներին (դասվարներին) նախապատրաստում է ատեստավորման.

6) կազմակերպում է մասնագիտական և մանկավարժական-մեթոդական խորհրդակցություններ, խորհրդատվություններ.

7) ուսուցիչներին (դասվարներին) հաղորդակից է դարձնում մանկավարժության նորագույն նվաճումներին, կազմակերպում է սեմինարներ, մանկավարժական-մեթոդական ընթերցումներ.

8) սահմանված կարգով կազմակերպում է փորձարկվող դասագրքերի փորձաքննություն.

9) մանկավարժական խորհրդում քննարկելուց հետո դպրոցի տնօրենին ներկայացնում է առաջարկություն ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամերի տնօրինման վերաբերյալ.

10) կատարում է ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխում և առաջարկություն է ներկայացնում դպրոցի տնօրենին.

11) կազմակերպում է դպրոցական օլիմպիադաներ, առարկայական մրցույթներ և այլ միջոցառումներ:

- Տարբեր դպրոցների և ուսուցիչների նախաձեռնությամբ կարող են ստեղծվել միջդպրոցական մեթոդական միավորումներ:
- Առարկայական մեթոդական միավորումների նիստերը գումարվում են առնվազն յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ: Սահմանված կարգով նիստերն արձանագրվում են:

Առարկայական մեթոդական միավորումների ղեկավարների աշխատանքային տարեկան պլանները քննարկվելու են համապատասան մեթոդական միավորումներում և մեթոդական միավորումներում ընդգրկված ուսուցիչները մասնակցելու են պլանների կազման աշխատանքներին:

Առարկայական մեթոդական միավորումների ղեկավարների աշխատանքային տարեկան պլանները հաստատվելու են տնօրենի կողմից օգոստոս ամսին: Այն ընդկրգված է ՀՀ հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատություններում գործածության ենթակա փաստաթղթերի անվանացանկում:

ՀՀ «Հանրակրթության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ուսումնական հաստատության առարկայական մեթոդական միավորումը համարվում է խորհրդակցական մարմին:

Առարկայական մեթոդական միավորուման նիստերը սահմանված կարգով արձանագրվում է առարկայական մեթոդական միավորուման արձանագրության մատյանում:

Առարկայական մեթոդական միավորումն իր լիազորությունների շրջանակներում լսում և քննարկում է իր կազմի ուսումնական առարկաների ուսումնառության գործնթացին առնչվող բոլոր հարցերն ու խնդիրները, կայացնում համապատասխան որոշումներ, որոնց կատարումը պարտադիր է ուսուցիչների, մանկավարժների, դաստիարակների, աշխատողների և սովորողների համար:

Առարկայական մեթոդական միավորման աշխատանքները համակարգվում և վերահսկվում են ուսումնական կամ մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տնօրենի տեղակալները՝ միաժամանակ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կրում են պատասխանատվություն ընդունված որոշումների կատարման համար:

Առարկայական մեթոդական միավորումն իր կազմից սահմանված կարգով առաջադրում է հաստատության մանկավարժական խորհրդի անդամներ:

Արձանագրությունների մատյանում գրանցվում են հերթական և արտահերթ բոլոր նիստերի օրակարգի հարցերի համառոտ շարադրանքները, իսկ ընդունված որոշումները ամբողջությամբ:

Օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ հաստատության տնօրենի, նրա տեղակալների, մեթոդական միավորումների նախագահների, առանձին ուսուցիչների, մասնագետների գրավոր զեկուցումները, հաշվետվությունները, հաղորդումները կցվում են մատյանին: Արձանագրելիս համառոտագրվում են բանավոր, ինչպես նաև կցված գրավոր ելույթի հիմնադրույթները, առաջարկությունները և դիտողությունները:

Մատյանի գրանցումները կատարվում են ընթեռնելի պատշաճ ձեռագրով: Սխալ կամ ոչ ճիշտ գրանցում կատարելու դեպքում տվյալ պարբերությունը, տողը կամ բառը փակագծով փակվում է (թույլ գիծ է դրվում սխալի վրա), և

լուսանցքում գրառվում է «սխալն իմկողմից է»՝ քարտուղարի ստորագրությունը, ամսաթիվը, ամիսը,տարեթիվը:

Առարկայական մեթոդական միավորման նիստերին հրավիրվում է տվյալ առարկան(ները) վերահսկող ուսումնական աշխատանքի գծով տնօրենի տեղակալը:

Նիստերի արձանագրությունները ստորագրում են մեթոդական միավորման նախագահը և քարտուղարը:

Առարկայական մեթոդական միավորման հերթական և արտահերթ նիստերի արձանագրությունների համարակալումը կատարվում է տվյալ ուսումնական տարվ սկզբից (սեպտեմբերի 1) և ավարտվում է ուսումնական տարվա վերջում (օգոստոսի 31):

Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին առարկայական մեթոդական միավորման առաջին նիստի ժամանակ ներկայացվում է մոթոդական միավորման նոր կազմը, որը նպատակահարմար է աղյուսակավորել հետևյալ ձևով.

Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

Ուսումնական հաստատության ---------- առարկայական մեթոդական միավորման կազմի մասին

Թիվ	Առարկայական մեթոդական միավորման անդամի Ազգանունը, անունը, հայրանունը	Ծննդյան թիվ	Կրթություն	Դասավանդվող առարկան	Տարակարգ, գիտական, ուսումնական կոչում	Աշխատանքային ստաժ	Կառավարման խորհրդի անդամ է (այո կամ ոչ)	Մակ. Խորհրդի անդամ է (այո կամ ոչ)	Ծանոթություն
1									

Ժամանակակից գիտության բոլոր ճյուղերը սերտորեն կապված են, և դա անհրաժեշտ է որ արտահայտվի դասավանդման ընթացքում և սա մեթոդ միավորման ուսուցիչների միասնական խնդիրն է:

Ուսուցման գործընթացում կարևոր տեղ պետք է հատկացնել միջառարկայական կապերին, որոնք ուսուցման հաջողության անհրաժեշտ պայմաններից են:

Ինտեգրված դասը ՝ դասի յուրահատուկ ձև է, որն իր մեջ ներառում է որևէ թեմայի, գաղափարի կամ երևույթի ուսումնասիրություն, մի քանի հարակից առարկաների միաժամանակյա կիրառմամբ: Այսպիսի դասերի ընթացքում առարկաներից մեկը հանդես է գալիս որպես առաջատար՝ միավորող, իսկ մյուսները որպես օժանդակող, որոնք նպաստում են առաջատար նյութի խորացմանը, ընդլայնմանը, վերամշակմանը:

Հիմնական շեշտը դրվում է առանձին առարկաներից, նույն առարկայի տարբեր թեմաներից ձեռք բերած գիտելիքները միմյանց զուգակցելու և դրանք կյանքում կիրառելու հմտությունների ձևավորման վրա: Կարևոր է, որ սովորողները դպրոցում ձեռք բերեն որոշակի գիտելիքներ և հմտություններ, որոնք հետագայում հաջողությամբ օգտագործեն կյանքում:

Անհրաժետ է մեթոդ միավորման աշխատանքներում կարևորել ներառական կրթության հետ կապված հարցերը, որոնք միասնական մոտեցում և յուրատիպ լուծումներ են պահանջում:

Անհրաժեշտ է աշակերտների քննությունների, օլիմպիադաների և մրցույթների արդյունքները, ուսումնական կիսամյակների և ուսումնական տարվա առաջադիմությունները ըստ դասարանների և առարկաների ամփոփել, վերլուծել, գնահատել: Խրախուսել հաջողությունները, վեր հանել թերացումները և գտնել շտկման ուղիները:

Եզրակացություն

Մեթոդական միավորումներում կարևոր է մասնակից ուսուցիչների դերը որակյալ ուսուցում կազմակերպելու համար, ընդհանրական մոտեցում կազմակերպելու համար, համագործակցելու համար և միասնական վերահսկողություն իրականացնելու համար

Գիտության ճյուղերը սերտորեն կապված են և որակյալ ուսուցման համար անհրաժեշտ է ընդհանրական մոտեցում:

Բնագիտական առարկաների ուսուցման ժամանակ միջառարկայական կապերի իրագործումը նպաստում է գիտելիքների խորը և բազմակողմանի յուրացմանը, գիտական հասկացությունների և օրենքների ձևավորմանը, ուսումնադաստիարակչական գործընթացի կատարելագործմանը և նրա օպտիմալ կազմակերպմանը, գիտական աշխարհայացքի ձևավորմանը, նյութական աշխարհի ընդհանրացմանը, բնության և հասարակության մեջ երևույթները փոխկապվածության մեջ ընկալելուն: Բացի այդ, միջառարկայական կապերը նպաստում են սովորողների գիտելիքների գիտական մակարդակի բարձրացմանը, զարգացնում են տրամաբանական մտածողությունը և ստեղծագործական ունակությունները:

Գրականություն

1. *ՀՀ «ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔ*
2. *ՀՀ «ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔ*
3. *Օ Ր Ի Ն Ա Կ Ե Լ Ի Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ*
4. *Մեթոդական միավորման մատյանի լրացման կարգը*
5. *ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՐԳ*
6. *ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ*